ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշման հավելվածի 4-րդ և 22-րդ կետերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2019 թվականի հուլիսի 4-ի N 27-2/27-2/11253-2019 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ ***Արգամ Առաքելյանին*** 2019 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ, չորս օրով գործուղել քաղաք Երևան՝ *«Մասիսեր Սթայլ»* սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ուսումնական կենտրոն *«Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում»* դասընթացին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ ***Արգամ Առաքելյանին*** գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի հուլիսի 12
ք. Հրազդան
N 117-Ա